Գյուղատնտեսության հողային ֆոնդի բարելավման ուղղությամբ առաջարկվող միջոցառումների շարքում առաջնակարգ դերը, մեր կարծիքով, պատկանում է նախ գյուղատնտեսական արտադրության կոոպերացմանը, խոշոր ապրանքային արտադրության կազմակերպմանը, ինչպես նաև այս ճյուղում փոքր և միջին բարձրարդյունավետ ձեռնարկությունների կազմակերպմանը և, իհարկե, այն թերությունների վերացմանը, որոնք նշված են սույն հոդվածի տեքստում:

ՍԵՐԳԵՅ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտության գծով փոխտնօրեն, տ.գ.դ., պրոֆեսոր

ԳԵՐԱՍԻՄ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող տ.գ.թ., պրոֆեսոր

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսությունը, զարգացման բոլոր փուլերում, միշտ համարվել է տնտեսության առաջնային զարգացման ճյուղերից մեկը և գտնվել է իշխանությունների ուշադրության կենտրոնում: Խորհրդային իշխանության տարիներից Հայաստանում իրականացվեցին ոռոգման, հողերի մելիորացման, խաղողի և պտղատու այգիների տնկումների խոշոր ծրագրեր, որոնց շնորհիվ երկրի ագրոպարենային ոլորտը դարձավ տնտեսության հզոր ճյուղերից մեկը: Դրան նպաստեցին նաև թեթև և սննդի արդյունաբերության զարգացումը, մեքենատրակտորային հավաքակայանների հզորացումը, ագրարային գիտության և կրթության արդիական համակարգի ստեղծումը:

Հայաստանն առաջինն էր նախկին Խորհրդային Միության երկրներից, որ ձեռնամուխ եղավ լայնածավալ բարեփոխումների հենց գյուղատնտեսության ոլորտում:

1991թ. գարնանը, մինչև երկրի անկախության հռչակումը, հաշվի առնելով ոլորտի կարևորությունը, հանրապետությունում իրականացվեց հողի սեփականաշնորհման և գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցների, սպասարկող ենթակառույցների, գյուղատնտեսական մթերքներ մթերող ու վերամշակող կազմակերպությունների մասնավորեցման քաղաքականությունը: Դա արվեց՝ հաշվի առնելով երկրի կենսագործունեության և տնտեսության կայունացման գործում գյուղատնտեսության կարևորությունը:Արդյունքում ագրոպարենային ոլորտում ձևավորվել է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատական տնտեսական համակարգ, որը ներառում է շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսություններ, գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններ, գյուղատնտեսության սպասարկման, գյուղմթերքների իրացման ու վերամշակման բազմաթիվ մասնավոր ընկերություններ:

Ներկայումս ագրոպարենային համակարգը տալիս է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) մոտավորապես 30%-ը, այդ թվում գյուղատնտեսությունը՝ 19%-ը:

Գյուղատնտեսության մեջ աշխատում են հանրապետությունում աշխատանքով զբաղվածների ընդհանուր թվաքանակի շուրջ 45.0%-ը:

Գյուղատնտեսությունը ոչ միայն ագրոպարենային համալիրի, այլև ամբողջ տնտեսության առավել բարդ ու աշխատատար ճյուղն է և պահանջում է պետության մշտական հոգածություն ներկայիս պահանջներին համապատասխան արդյունավետ կազմակերպում: Գյուղատնտեսու-

թյունը վճռական դեր ունի հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման և պարենային անվտանգության ապահովման գործում:

Գյուղատնտեսության մեջ հիմնական հողօգտագործողները գյուղացիական տնտեսություններն են, որոնք տնօրինում և օգտագործում են վարելահողերի 71,7%-ը, բազմամյա տնկարկների 78,3%-ը, խոտհարքների 48,4%-ը:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելի քան 98%-ը արտադրում է մասնավոր հատվածը:

Ձեռքբերումներն ավելի ակնառու կլինեին և անցումային շրջանի դժվարություններն ու խոչընդոտներն ավելի արագ կհաղթահարվեին, եթե իշխանությունների կողմից գյուղատնտեսության բարեփոխումները և սեփականաշնորհման գործընթացը չկատարվեր հապճեպ, կոպիտ սխալներով ու բազմաթիվ թերություններով, որոնց մի մասը դեռևս վերացված չեն: Կային նաև այլ պատճառներ՝ երկրի շրջափակումը (որը մինչև օրս շարունակվում է), էներգետիկ ճգնաժամ, բարձր էշալոնի կառավարման կադրերի անտեղյակությունը տնտեսությունից ու ճյուղերից, ավելին, մի մասի ընչաքաղցությունը և հանրապետությունում տիրող անպատժելիության մթնոլորտը և այլն մեծ վնաս հասցրեց երկրի էկոնոմիկային: Այդ տարիներին (մինչև 1998թ.) անկում ապրեց գյուղատնտեսության բոլոր ճյուղերը, մասնավորապես այգեգործությունը և անասնաբուծությունը:

1990-97թթ. գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերական ձեռնարկությունների կաթվածահար վիճակի և գինու ու կոնյակի արտահանման դժվարությունների հետևանքով մեծապես տուժեց խաղողագործությունը: Քանդվեցին ավելի քան 7 հազար հեկտար խաղողի բարձր բերքատու այգետարածքներ: 1998թ. հետո հումքի իրացման հետ կապված դժվարությունները աստիճանաբար հաղթահարվեցին, ստեղծվեց արտադրանքի իրացման շուկա: Վերամշակող ձեռնարկությունների գործունեության ակտիվացման կարևոր արդյունքներից պետք է համարել նաև այն, որ դրանք հնարավորություն ստացան ժամանակին վճարել գնված հումքի արժեքը: Մթերքներ արտադրողների և վերամշակողների միջև աստիճանաբար արմատավորվեց պայմանագրային հարաբերությունները, ինչը հիմք է հանդիսացել վերացնելու մթերումների գործընթացում եղած դժվարությունները: Այսպես, եթե հումք վերամշակող ընկերությունները 2004թ. մթերել են 35.806 տոննա բանջարեղեն, 4.394տոննա պտուղ և 79.359 տոննա խաղող, ապա 2007թ. մթերվել է, համապատասխանաբար, 57.111, 14.844 և 144389 տոննա, կամ բանջարեղենի գծով աճը կազմել է 59.5%, խաղողինը՝ 82.0%-ով, իսկ պտղինը՝ ավելի քան 3.4 անգամ:

Ներկայումս տարեցտարի մեծանում է հատկապես խաղողի հումքի պահանջարկը, և հողօգտագործողները ակտիվորեն իրականացնում են մաքրասորտ խաղողի այգիների հիմնման և մշակության առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման ծրագրեր:

Գյուղատնտեսական արտադրանքի ծավալների ավելացման և ապրանքայնության մակարդակի բարձրացման համար մեծ խոչընդոտ է հանդիսանում գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը, դրանց թույլ նյութատեխնիկական բազան, արտադրության մեքենայացման ցածր մակարդակը:

Այսօրվա դրությամբ միջին հաշվով, մեկ տնտեսությանը ընկնում է 1.01 հեկտար վարելահող, 0.12 հեկտար բազմամյա տնկարկ, 0.20 հեկտար խոտհարք:

Ավելին, Արարատյան հարթավայրում գյուղացիական տնտեսություններն ունեն ավելի փոքր մշակովի հողատարածություններ, քան հանրապետության միջինն է: Արարատի մարզում, միջին հաշվով, մեկ տնտեսությանն ընկնում է 0.48 հեկտար, իսկ Արմավիրի մարզում 0.68 հեկտար վարելահող: Հասկանալի է, որ նման պայմաններում ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրման և ժամանակակից տեխնիկական միջոցների օգտագործման մասին ակնկալելը պարզապես անիմաստ է:

Հողերի մասնատվածությունն էական խոչընդոտ է տնտեսությունների խոշորացման, գյուղատնտեսության առաջադիմության, տնտեսական արդյունավետության և մրցակցության բարձրացման առումով:

Մեր կողմից Արարատի ու Արմավիրի մարզերում կատարած հարցում հետազոտությունները ցույց տվեցին, որ գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունների զգալի մասը ֆինանսական սուղ միջոցների պատճառով հնարավորություն չունեն ոչ միայն համալրելու և արդիականացնելու իրենց նյութատեխնիկական բազան, այլև կատարելու ագրոտեխնիկական կանոններով նախատեսված աշխատանքների ցանկը: Այդ բոլորի հետևանքով անխուսափելի է գյուղատնտեսական մշակաբույսերի ցածր բերքատվությունը, որն էլ, իր հերթին, պայմանավորում է անբավարար ֆինանսական միջոցների գոյացումը: Այս առումով վիճակն ավելի վատ է լեռնային ու նախալեռնային տարածաշրջանների գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում:

Հումքի արտադրության ոլորտում գոյություն ունեցող անբավարար վիճակը չի կարող իր ազդեցությունը չթողնել վերամշակող արդյունաբերական ձեռնարկությունների գործունեության վրա, քանի որ վերջիններիս համար հումքային բազան լիարժեք գործունեություն ծավալելու ամենակարևոր երաշխիքն է: Ստացվում է յուրահատուկ փակ շղթա և, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, նման վիճակից գյուղացին ինքնուրույն, առանց արտաքին միջամտության դուրս գալ չի կարող:

Վերջին 6-7 տարիների ընթացքում հանրապետությունում իրավական դաշտի ստեղծման, կողմնորոշված տնտեսական քաղաքականության, արտերկրների ինվեստիցիաների ընդհանուր ծավալի մեծացման, Սփյուռքի և միջազգային կազմակերպությունների օգնության, հանրապետության բյուջետային հատկացումների մեծացման և կազմակերպական միջոցառումների հետևողական իրականացումը, հողօգտագործողներին պետական աջակցությունը (սուբսիդավորում, ցածր տոկոսադրույքներով վարկերի տրամադրում, տարբեր աղբյուրներից վարկային ծրագրերը և այլն) նպաստավոր պայմաններ են ստեղծում իրականացնել գյուղատնտեսության նախարարության կողմից մշակված և կառավարության կողմից հավանության արժանացած գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությունը (2015թ.), որում սահմանված են ոլորտի զարգացման հետևյալ հիմնական ուղղությունները.

- գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կհասցվի 446.1 հազար հեկտարի, որը 2003-2005թթ. մակարդակը կգերազանցի 37.7%-ով: Կերային մշակաբույսերի տարածությունը կհասցվի 185.0 հազար հեկտարի, 2005թ. 61.0 հազար հեկտարի փոխարեն:
- Մեծ առաջընթաց կունենա խաղողագործությունը և պտղաբուծությունը: Նախատեսվում է այգիների տարածությունը հասցնել 72.0 հազար հեկտարի, 2003-2005թթ. համեմատությամբ կավելանա, համապատասխանաբար՝ 3.3 և 1.6 անգամ:
- Որոշակի փոփոխություններ տեղի կունենա բուսաբուծության և անասնաբուծության ներճյուղային կառուցվածքում, կավելանա պտղի, խաղողի, կարտոֆիլի, բանջարեղենի, կերային ու տեխնիկական մշակաբույսերի համախառն արտադրությունը: Դա կիրականացվի արտադրության հետևողական ինտենսիվացման, բարձր բերքատու սորտերի շրջանցման ու մշակության տեխնոլոգիաների արդիականացման շնորհիվ: Կանխատեսվող ժամանակաշրջանի վերջում հացահատիկային մշակաբույսերի, կարտոֆիլի և բանջարեղենի բերքատվությունը 2003-2005թթ. համեմատությամբ կաճի, համապատասխանաբար՝ 47.9 , 21.0 և 20.6%-ով:
- Նախատեսվում է անասնաբուծական մթերքների աճ տոհմային գործի զարգացման, կերակրման ու պահվածքի բարելավման հաշվին: Մեկ կովի միջին կաթնատվությունը կհասցվի 2500կգ-ի, 2006թ. 1890կգ-ի փոխարեն:

- Ձեռնարկվող միջոցառումների իրականացման արդյունքում գյուղատնտեսության համախառն արտադրության ծավալը 1990թ. մակարդակը կգերազանցի ավելի քան 70%-ով, իսկ պարենի ու հումքի արտահանման ծավալները կավելանան 4.5 անգամ: Ի դեպ դա տեղի կունենա աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին, քանի որ գյուղատնտեսության մեջ կշարունակվի զբաղվածների թվաքանակի կրճատման միտումը:

Կանխատեսման հաշվարկները վկայում են, որ տեղական արտադրության հաշվին զգալիորեն կավելանա պարենամթերքների ապահովվածությունը և կկրճատվի գյուղական բնակչության աղքատությունը:

Գյուղատնտեսության ոլորտի այս կարևորագույն հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ են.

1. Հանրապետությունում իշխանությունների կողմից մշակել միասնական ու համակարգված մոտեցումներ՝ հատկապես հողի շուկայի կայացման և գյուղատնտեսական սեփականաշնորհված հողատեսքերի միավորման ու խոշորացման ուղղությամբ: Մեր կարծիքով, հողերի միավորման (կոնսոլիդացման) հիմնախնդրի լուծման լավագույն ուղիներից մեկն արտադրական կոոպերատիվների ստեղծումն է: Սա բնորոշ է անցումային փուլում գտնվող ու զարգացող երկրներին, որոնք բնութագրվում են փոքր գյուղացիական տնտեսություններով, արտադրության միջոցների (հատկապես գյուղատնտեսական տեխնիկայի) ու ֆինանսական ռեսուրսների սակավությամբ, իրացման շուկայի ու կառուցակարգերի թերզարգացածությամբ, որոշ դեպքերում՝ գյուղատնտեսական արտադրության վարման ու արտադրանքի իրացման գործընթացի կազմակերպման վերաբերյալ գիտելիքների և աշխատանքի փորձի բացակայությամբ: Պահանջվում է իշխանությունների բոլոր թևերի կողմից ակտիվ աջակցություն՝ օրենսդրական (գյուղատնտեսական կոոպերատիվների մասին օրենքի ընդունում), գործադիրի կողմից՝ կոոպերատիվների ստեղծման խթանում (սուբսիդավորում, դրամաշնորհների տրամադրում, արտադրանքի գնում, վարկային ու հարկային արտոնություններ, լիզինգային ծառայություն և այլն): Կարծում ենք, պետք է շարունակել գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիրը, նկատի ունենալով, որ այդ ծրագրով ֆինանսական մեծ օգնություն է ցուցաբերվում ֆերմերային տնտեսություններին:

2. Իրավաբանական դաշտը պետք է այնքան պարզ ու հասկանալի լինի, որ գյուղացին պարզաբանումների համար լրացուցիչ իրավաբանական խորհրդատվության կարիքը հնարավորինս քիչ ունենա:

3. Կոոպերացիայի զարգացման հետ միասին փոքր հողակտորների վրա արդյունավետ տնտեսվարմանը պետք է նպաստեն ճյուղը սպասարկող ծառայությունների և շուկայական ենթակառուցվածքների ընդլայնումն ու մրցակցության բարձրացումը:

4. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղացիական տնտեսությունների նյութատեխնիկական ապահովման և արտադրական սպասարկման կազմակերպման գործընթացը անմխիթար վիճակում է: Համայնքներում չեն նկատվում գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ տնօրինման և օգտագործման միտումներ: Գյուղացիական տնտեսություններում անցկացրած հարցումների արդյունքների ամփոփումից պարզվեց, որ տեխնիկական սպասարկման նպատակով անհրաժեշտ է ստեղծել նոր կառույցներ՝ պետական, կամ մասնավոր, այս հարցում լավ կլինի նախաձեռնողի դերում հանդես գան տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները: Կարծում ենք, որ առանձին ծրագրերով պետության կողմից ներկրվող (Հնդկաստանից, Չինաստանից, Ճապոնիայից և այլն) տրակտորները և գյուղատնտեսական մեքենաներն ու սարքավորումները, թեկուզ ցածր գներով (աճուրդ-վաճառք) տրամադրել ոչ թե առանձին հողօգտագործողներին, այլ դրանց միավորումով ձևավորել մասնագիտացված կառույցներ: Դա թելադրված է հետևյալ իրողությամբ. մեքենաներն այնքան շատ չեն, որ յուրաքանչյուր գյուղացիական տնտեսության գոնե մեկ միավոր հասնի, բացի դա,

տնտեսությունների մեծ մասը ֆինանսապես ի վիճակի չէ ձեռք բերել դրանք և, որ ամենակարևորն է, արդյունավետ օգտագործել: Այդ մասին է վկայում հանրապետությունում նոր կազմավորված տեխնիկայի կենտրոնացված հավաքակայանների աշխատանքի փորձը: Այսպես, Նորվեգիայի կառավարության և ՄԱԶԾ-ի աջակցությամբ Շիրակի մարզի Բավրայում հիմնվել է գյուղատնտեսական մեքենաների հավաքակայան՝ համալրված նոր գյուղատնտեսական մեքենաներով, որը սպասարկում է Աշոցքի տարածաշրջանի 4 սահմանամերձ համայնքներին: Հիմնավորված է, որ ֆերմերային տնտեսությունների ձևավորման այս փուլում առավել նախընտրելին և արդյունավետն անհրաժեշտ հզորությամբ վճարովի ծառայություն կատարող կազմակերպություն ստեղծելն է: Կարծում ենք, այս կառույցներին կարելի է վստահել նաև պարարտանյութերի, թունաքիմիկատների և մյուս նյութական միջոցների ձեռքբերման ու բաշխման գործը, արդյունքում կվերանան այս ոլորտում առկա անօրինականությունները:

5. Չնայած գյուղատնտեսական մթերքների վերամշակման համակարգի գործունեության աշխուժացումն ու արտահանման ծավալների ավելացումը որոշակիորեն նպաստել են գյուղատնտեսական արտադրանքների իրացման հիմնախնդրի մեղմացմանը, այնուամենայնիվ այդ ոլորտում էլ դեռ լուծում պահանջող խնդիրներ կան: Դրանց լուծման ուղիներից մեկը, կարծում ենք գյուղական փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացումն է: Մոտ ապագայում արտադրված գյուղատնտեսական մթերքների զգալի մասը պետք է վերամշակել գյուղական համայնքներում ստեղծված ու գործունեություն ծավալող ՓՄՁ սուբյեկտների միջոցով: Այդ ոլորտի զարգացումն ունի նաև սոցիալ-տնտեսական նշանակություն: Կստեղծի աշխատատեղեր, կնպաստի գյուղական բնակչության աղքատության նվազեցմանը:

6. Նկատի ունենալով գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը և դրանց գերակշռող մասի սուղ ֆինանսական միջոցները, նպատակահարմար է համայնքներում համատեղ միջոցներով (դարձյալ կոոպերատիվ հիմունքներով) կառուցել և շահագործել փոքր (10-20տ տարողությամբ) սառնարանային տնտեսություններ, որոնք կօգտագործվեն արտադրանքի մի մասի պահեստավորման և երկարատև պահպանման ու անհամեմատ բարձր գներով ուշ աշնանը, ձմռանը և վաղ գարնանը իրացնելու համար: Գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակի բարձրացումը (մինչև 70%) հնարավորություն կտա էականորեն ավելացնել գյուղացիական տնտեսությունների դրամական հոսքերը և վերարտադրողական կարողությունները: Ռազմավարությունը սահմանում է, որ ընդունելով ազատական տնտեսության պայմաններում պետական միջամտության սահմանափակումը, միաժամանակ, հստակեցվում են անցումային փուլում պետության կողմից իրականացվող գործառույթները:

7. Պետությունը պետք է աջակցի խոշոր ինժեներական (ոռոգում, գրունտային ավելորդ ջրերի հեռացում, արոտների ջրարբիացում, ճանապարհաշինարարություն և այլն) և գյուղերի սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը: Տնտեսվարման ներկա պայմաններում, երբ արմատապես փոխվել է հողօգտագործման համակարգը և մշակովի հողատարածությունները կազմում են 1.2 մլն. հեկտար, առանձնահատուկ կարևորվում է գյուղատնտեսության և սպասարկող ենթակառուցվածքների արդիականացումը:

8. Գյուղատնտեսական մթերքների վաճառքի գծով վերականգնել պետական պատվերի համակարգը: Ներտերկրների փորձը վկայում է, որ արտադրանքի իրացման այդ ուղին արդյունավետ և արդիական է: Պետությունը հանդես է գալիս որպես արտադրանքի մեծաքանակ երաշխավորված գնորդ, արտադրող սուբյեկտների համար դառնալով գրավիչ ու ցանկալի գործընկեր: Տարվա բնակլիմայական պայմանների օբյեկտիվ իրավիճակից և արտադրողների տնտեսական շահերից ելնելով, պարենային առանձին մթերքների գծով կիրառել գնումների ինտերվենցիա և գների սուբսիդավորում: Արտադրանքի իրացման այս ուղին պայմաններ կստեղծի մթերքներ արտադրողների միջև ծավալել մրցակցություն՝ բարձր որակի, արտադրանքի իրացման երաշխավորված պատվերներ ստանալու համար:

9. Ամբողջական լուծում չեն ստացել գյուղատնտեսության վարկավորման և ռիսկերի ապահովագրման հիմնախնդիրները: Ճիշտ է, առևտրային բանկերի միջոցով չնայած տարեց տարի ավելանում են գյուղատնտեսությանն հատկացվող վարկային միջոցները, սակայն դա բավարար չէ, այն դեռևս բավարարում է պահանջարկի մոտ 10-15%-ը:

10. Պետությունը պետք է շարունակի անասունների ու բույսերի համաճարակային և կարենտին հիվանդությունների կանխարգելման, սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգի, շուկայական հնարավորությունների ընդլայնման և ազատ մրցակցության ապահովման որդեգրած ծրագրերի իրականացումը և կատարելագործումը:

Մեր կարծիքով խիստ հրատապ է նաև գյուղատնտեսական որոշ արտադրանքների (թարմ և վերամշակված) արտահանման աջակցության համար նպատակային վարկավորման համակարգի ստեղծումը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ երկրներում այդ ծրագիրն իրականացվում է մասնագիտացված բանկերի կամ այլ ֆինանսավորող կազմակերպությունների միջոցով: Հայաստանում դեռևս վաղ է արտահանման մասնագիտացված բանկի ստեղծումը, սակայն այս գործառույթը ևս կարելի է իրականացնել ԳՖԿ-ի և նրա հետ համագործակցող բանկերի միջոցով:

Գյուղացու եկամուտների ավելացման և ծառայությունների բարելավման գործում դրական աշխատանքներ է կատարում «Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցություն» ծրագրի իրականացման գրասենյակը: Հանրապետության գյուղական տարածքներում մի շարք ուղղություններով (ջրամատակարարման. ոռոգման, տեխնիկայի, գազաֆիկացման և այլն) իրականացվում են լայնածավալ աշխատանքներ: 2005թ. մինչև օրս մարզերի 134 համայնքներում կատարված աշխատանքները գերազանցում են 13.0 մլն ԱՄՆ դոլարը: Նմանատիպ 156 ծրագրեր արդեն սկսվել են հանրապետության տարբեր գյուղերում: Ի դեպ դրամաշնորհը տրամադրվում է համայնքին, որոնք ընտրվել են կոնկրետ չափորոշիչներով, որը ինքնուրույն որոշում է զարգացման այն ուղղությունը, որը իրենք գտնում են առավել նպատակահարմար՝ այդ միջոցները ներդնելու առումով: Այդ նույն գրասենյակի կողմից իրականացվում է մրցակցային դրամաշնրհային ծրագիր, որը տրվում է ֆերմերային տնտեսություններին լավագույն նորարարական առաջարկությունների համար: Դրանք ուղղված են ինչպես շուկայահանման կատարելագործմանը, այնպես էլ նոր, բարձրարժեք մշակաբույսերի ներդրման արդիական խնդիրների լուծմանը: Արդեն իրականացվել են 38 ծրագրեր, որոնք արժանացել են Համաշխարհային բանկի և հանրապետության գյուղատնտեսության նախարարության հավանությանը: Բացի դա, առևտրային բանկերի միջոցով, արտոնյալ պայմաններով, տրամադրվում են երկարաժամկետ վարկային ռեսուրսներ, որոնք նպատակաուղղում են վերամշակող ձեռնարկությունների և ֆերմերային տնտեսությունների զարգացմանը: Այդպիսով, կլուծվի նաև գյուղատնտեսական արտադրանքի (հումքի) մթերման ու վերամշակման խնդիրը: Դրանք ենթակառուցվածքային, շահույթ հետապնդող ծրագրեր են, որոնք համահունչ են կառավարության կողմից իրականացվող գյուղական տարածքների զարգացման ռազմավարությանը:

Քաղաքական և տնտեսական մարտահրավերները անհետաձգելի են դարձնում ՀՀ գյուղատնտեսության զարգացման և հիմնական պարենամթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացման 2008-2012թթ. ազգային ծրագրի մշակումը և ընդունումը: Դա պայմանավորվում է միջազգային շուկայում պարենամթերքների հիմնական տեսակների (ցորեն, եգիպտացորեն և այլն) գների շեշտակի բարձրացմամբ և բիովառելիքի օգտագործմամբ: Հանրապետությունում խնդիր է դրվում լուծել ցորենի (հացի համար), եգիպտացորենի, կաթի, ձվի, թռչնամսի և այլ արտադրատեսակների արտադրության ավելացումը, ինքնաբավության մակարդակի բարձրացումը լուծել ինտենսիվ՝ ինովացիոն տեխնոլոգիաների, ժամանակակից մեքենաների, ոռոգման եղանակների, բարձրորակ սերմնացուի օգտագործման, թունաքիմիկատների, բույսերի պաշտպանության միջոցների առաջավոր մեթոդների ներդրման ու զարգացման ուղիով:

Այս հիմնախնդրի լուծումը համարվում է պետության տնտեսական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը:

Բացի պետական աջակցությունից, ազգային ծրագրի կատարումը պետք է կազմակերպել այնպես, որպեսզի ֆինանսական կառույցները հնարավորինս թափանցեն սահմանային, նախալեռնային ու լեռնային շրջաններ, ինչը էապես կնպաստի գյուղատնտեսական արտադրության և գյուղական վայրերում փոքր ու միջին բիզնեսի զարգացմանը:

ՀԵՆՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

ԲՈՒՍԱԲՈՒԾԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՅԻՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

ՀՀ-ում 1991-1992թթ. սկսված բարեփոխումները արմատապես փոխեցին երկրի ողջ հասարակական-սոցիալական կերպարը: Գերխնդիր դրվեց սոցիալիստական արտադրահարաբերությունների ապամոնտաժման և մասնավոր սեփականության հենքի վրա ձևավորել ազատ շուկայական տնտեսություն:

Ներկայումս ՀՀ-ում գյուղատնտեսության կազմակերպական հիմնական ձևը գյուղացիական տնտեսություններն են, որոնք տալիս են գյուղատնտեսության համախառն արտադրանքի մինչև 90-93%-ը: Մնացած մասը տալիս են դեռևս պետական կարգավիճակը պահպանած գիտական, ուսումնական, տնկարանային և այլ հատուկ նշանակության, ինչպես նաև խոշոր մասնատիրական, մի քանի կոոպերատիվ տնտեսությունները, վկայելով հողի սեփականության բազմաձևության առկայությունը:

Գյուղացիական տնտեսություններից յուրաքանչյուրը, որոնց թիվը ՀՀ-ում ներկայումս հասնում է շուրջ 340 հազարի, միջին հաշվով տիրապետում է 1.40հա օգտագործելի հողահանդակների, որից 1.0հա վարելահող և 0.2-ական հեկտար տնկարկներ ու խոտհարքեր: Այս ցուցանիշները զգալիորեն տատանվում են ոչ միայն ըստ մարզերի, այլև հաճախ հարևան համայնքների:

Գյուղացիական տնտեսությունը Հայաստանում, համենայն դեպս, ներկա սերնդի համար որպես հասարակական արտադրության կազմակերպական ձև նորություն է: Այդպիսի տնտեսություն վարելու պատրաստ չէին, առաջին հերթին իրենք՝ գյուղացիական տնտեսություն վարողները, պատրաստ չէին արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքները, պատրաստ չէր կառավարման համակարգը և, որ ամենակարևորն է, պատրաստ չէր ագրարային շուկան: Այնուհանդերձ, գյուղացիական տնտեսությունների կազմավորումը ընթացավ սրընթաց ու հապճեպ; հիմնականում 1891թ. փետրվար - ապրիլ ամիսներին՝ գարնանացանը բաց չթողնելու ակնկալիքով:

Այս բոլորի հետևանքը եղավ այն, որ գյուղատնտեսությունը Հայաստանում հայտնվեց խոր ճգնաժամի մեջ: Արագորեն պակասեցին ցանքատարածությունները, այգետարածություններն ու անասունների գլխաքանակը, ընթացան կառուցվածքային բացասական գործընթացներ,